

26 Յունիս

Պ. Կոշէն կայսեր հետ տեսակցութիւն մ'ունեցաւ:

Մեծ կարեւորութիւն կը տրուի այս տեսակցութեան: Պաշտօնէից փոփոխութեան խօսքեր կը լսուին ականջէ ականջ:

**

Երլտըզի պալատէն հարձ մը Անգղիոյ դեսպանատունը փախչելով՝ անոր պաշտպանութիւնը խնդրած է: Ի՞նչ բանի. յայտնի չէ:

Արդեօք այս հա՞րձն ալ ինքնօրինութիւն կը պահանջէ:

27 Յունիս

Ամենակարեւոր յայտարարութիւն մը....:

Կրօնական պատկառելի Ժողովն, պաշտօնական յայտարարութեամբ, կը ծանուցանէ բարեպաշտ ժողովրդեան՝ որ իւր եւ պատրիարքին միջեւ բնաւ անհամաձայնութիւն չկայ:

Մեր պաշտօնական շնորհակալութիւնները կը յայտնենք այս պաշտօնական յայտարարութեան:

28 Յունիս

Պատերազմական գործոց նախարար Օսման բաշա, որ Պլէվնայի մէջ քառասուն հազար զօրքով ռուսաց ձեռքը գերի իյնալուն ի վարձատրութիւն այս պաշտօնին բարձրացած էր, պաշտօնէ ինկաւ, եւ նմա յաջորդեց Հիւսէին Հիւսնի բաշան, որ ժողովրդեան ծանօթ է իւր *անծանօթութեամբը*:

Կ'ասեն թէ Օսման բաշան պատերազմ ուզելուն համար ինկաւ. իւր յաջորդն ալ անշուշտ պատերազմ չուզելուն համար պիտի իյնայ:

Մենք ալ շուարեցանք մնացինք, թէ ի՞նչ ուզենք եւ ի՞նչ չուզենք:

29 Յունիս

Այսօր կիրակի է եւ պաշտօնական կիրակի – շաբթուան միւս օրերն ալ ժողովուրդը գործի չերթար, վասն զի Թուրքիոյ մէջ գործ չկայ. սարսափելի տաք կ'ընէ, միայն թուրք լրագիրներն իրենց պաղ յօդուածներովն օդը կը բարեխառնեն: